ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ԲՊ-ԷԱՃԱՊՁԲ-19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստի

ք.Գյումրի «12» փետրվար 2019թ. 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Չախոյան, Ս.Դարբինյան, Ա.Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Հարությունյան

1. <<ԲՊ-ԷԱՃԱՊՁԲ-19>> ծածկագրով մրցույթի արդյունքների ամփոփման մասին.

/Ն. Հովհաննիսյան/

Հաշվի առնելով <<Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ կողմից դեղորայքի ձեռքբերման համար հայտարարված <<ԲՊ-ԷԱՃԱՊՁԲ-19>> ծածկագրով ԷԱՃ մեթոդով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ինչպես նաև այն հանգամանքը. որ 04.02.2019թ.-ին հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝նշված ծածկագրով մրցույթի մասնակիցներ՝ «Նատալի ֆարմ» ՍՊԸ, «Ալֆա ֆարմ» ՓԲԸ և «Լեյկո» ՍՊԸ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ և ՀՀ ՖՆ ՏՏԵՆՁ վարչության աշխատակից Հ. Նաջարյանի կողմից 07.02.2019թ.-ին դրական եզրակացություն է ներկայացվել վերոհիշյալ առաջին և երկրորդ մասնակիցների համար, սակայն «Լեյկո» ՍՊԸ մոտ բացակայում էր 2018թ. համախառն եկամտի գումարը:

Մասնակցին 05.02.2019թ. էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև համակարգով ծանուցվել է անհամապատասխանության մասին և առաջարկվել սահմանված ժամկետներում շտկել և համապատասխան փաստաթղթեր ներկայացնել «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ: Մասնակիցը սահմանված ժամկետներում ուղարկել է համապատասխան փաստաթղթեր և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել բավարար:

Ինչպես նաև բավարար են գնահատվել մասնակիցների կողմից ուղարկված ապրանքի ամբողջական նկարագրերը: Այսպիսով, համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման՝ վերոգրյալ կազմակերպությունների կողմից ներկայացված տվյալները համարվում են իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4,դեմ 0:

2. Հանձնաժողովը որոշեց՝

2.1 «Նատալի ֆարմ» ՍՊԸ, «Ալֆա ֆարմ» ՓԲԸ և «Լեյկո» ՍՊ ընկերություններին համապատասխան չափաբաժինների գծով ճանաչել հաղթող մասնակիցներ և ընկերություններին ծանուցելով այդ մասին՝ առաջարկել կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4,դեմ 0:

Նախագահ՝ _____ Ն.Հովհաննիսյան

Անդամներ՝ _____ Ս.Դարբինյան

_____ Լ.Չախոյան

_____ Ա. Կարապետյան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան